

ՀԱՆԴԵՍ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԵԼՈՅ

ԽԱֆազելեան ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Եթէ ազգասիրաց սրտին մեծ ուրախութիւն և միխթարութիւն է որ և իցէ ազգային յառաջադիմութիւն մը, և սառաւել ազգու պիտի ըլլայ ազգային վարժարանաց բարեկարգ ընթացքը և անոնց մէջը վարժելոց յառաջադիմութիւնը + որովհետեւ որ ինչպէս տղայք իրենց հարցը կեանքը պիտի մշտնջենաւորեն, այսպէս ալ վարժարանները կամ որ նոյն է՝ անոնց մէջի կրթուողները պիտի ըլլան՝ ազգի մը մշտնջենաւոր կենդանութիւն տուողները : Ի՞ս ասանկ ըլլալուն տարակից չունինք որ բոլոր ազգին՝ և առանձին օրագրիս ընթերցողացը, և 'ի մասնաւորի նոյն աշակերտուցը ծնողաց ու ազգականաց ալ մեծապէս հաճոյ կանցնին ամսօրեայ թերթիս անհատուածները՝ որ հեռու աշխարհք իրենց որդւոցն ու սիրելեացը յառաջադիմութեանը կը վկայեն . ուստի մենք ալ կամակար կընուիրենք օրագրիս քանի մը թերթերը անոնց ըղձիցը . և որովհետեւ անցեալ ամիս զրինք Փարիզու Առուրատեան վարժարանին հարցաքրննութեան հանդէսը, հոս ալ զնենք համառօտ մը Արաֆայէլեան Արժարանին մէջ կատարուած նոյն հանդէսը 'ի վախճան երկլորդ ամիս աշակերտութեանողաց :

Աւսմանց հարցաքննութիւնը կատարեցաւ Աեպտեմբեր ամսուն 6^ն Արժարանի ինսամակալաց և վարժապէտաց ժողովցն առջելը, և աշակերտք քննուեցան իրենց տարեկան ուսմանց վրայօք որ կը տեսնուի առաջիկայ ցանկին մէջ :

Վնասնք ըսել թէ ընդհանրապէս ա-

մէնքն ալ քան իրենց հասակը, և իրենց աշակերտութեան ժամանակին համեմատ՝ շատ ջանք և յառաջադիմութիւն ցցուցին ամէն վերոյգրեալ ուսմանց մէջ, մասնաւորապէս նաև լեզուաց թէ Հայերէն ըլլայ, թէ Վաղղիերէն և թէ Խտալերէն :

Գեղարուեստից մանաւանդ Աւրուագրութեան և գիւղանկարի մէջ ալ շատ մեծ յառաջադիմութիւն երեցաւ, այնպէս որ ինչուան քաղքիս գեղարուեստից Ճեմարանին վարժապէտն մասնաւոր գովեստի և միցանակի արժանի դատեց աշակերտները : Ալ խոստովանինք որ տղոց ջանքէն ետեւ ու վրանին եղած ընդհանուր փութաջան տեսչութենէն 'ի զատ, Պ. Խտասի ուրուագրութեան և Ճարտարապէտութեան վարժապէտին անխոնջ և մշտատեւ աշխատանց արդինքն է աս զգալի յառաջադիմութիւնը . և որուն պահուած է մեծագոյն միցանակ մը աշակերտաց, դաստիարակաց և բոլոր ազգի մը երախտագիտութիւնը :

Կարծնական և ձայնական երաժեշտութեան մէջ ալ աշակերտաց սակաւաթուութեան նայելով յաջողակներ երեցան, և յետագայից ալ յուսանք աւելի քաջալերութիւն ըլլայ լսելը որ իտալացի ականջք լսեցին ու ախորժեցան աշակերտաց ձեւացուցած ներդաշնակութիւնը :

Աւսման քննութիւնը այսպէս կատարելէն ետեւ ամսուն 9^ն մեծ փառաւորութեամբ տեղի ունեցաւ միցանակի հանգիւը, որուն առաջ հրաւիրած էին

բոլոր Ա անգի Ո՞ի արաբանքը և աշակերտը , քաղքիս սրբազնն Պատրիարքին փոխանորդը , Ա երժնայի անուանեալ եպիսկոպոսը թարէ վիզանաթոյ Ի՞ստուածաբան վարդապետը , Պերապատիւ Պիտրոս Փիտանթմ եկեղեցական իրաւասութեան և օրինաց վարդապետը , և ուրիշ քանի մը աստիճանաւոր եկեղեցականք . աշխարհականացմէ ալ վարժարանիս արտաքին վարժապետներէն զատ ուրիշ քանի մը պատուաւոր անձինք 50 , 60 հոգի , որոնց գահէրէց կը նստէր Ի՞ստուածապատիւ ընդհանրական Ի՞սբայն Գէորգ Ա . Հիւրմիւզեան Ի՞լքեպիսկոպոսը , որոնք միաբան Ա արժարանիս մատրան մէջ Զէւշ Աստուած գովարանական երգը երգելէն ետե՝ ժողովեցան մեծ դահլիճը ուր որ ՚ի ցոյց զրուած էին աշակերտաց Ուրուագրութեան , Պիւզանկարի , Շարտարապետութեան և Օ արդագծութե ձեռագործները : Հոն տեսուչ Ա արդապետը Ճառ մը խօսեցաւ ցուցը նելով Ա . թէ ինչպէս տղոց Ճշմարիտ դաստիարակութեան սկիզբը իրենց ծընողացմէ պէտք է սկսի , որով դաստիարակութիւնը ըլլայ աւելի հիմնական , և վերջը առանձին դաստիարակաց աշխատութիւնն ալ դիւրին և միանգամայն բազմարդիւն :

Բ . թէ աշակերտաց դաստիարակութեան ժամանակը լըմըննալէն ետե , թէ ծնողը և թէ ազգը ինչ պարտականութիւններ ունին՝ անոնց առած կրթութիւնն և սորված ուսմունքները ՚ի բարին և յօգտակարն գործածելու . և թէ հիմնակուան ժամանակս առջի մասին պակասութեամբը տղոց կրթութիւնը խիստ ծանր պաշտօն մըն է դաստիարակաց , երկրորդին պակսութենէն ալ նոյն ինքն կրթութիւնը և ուսմունքը իրեն արժանաւոր օգուտը ըներեր աշակերտաց : Ի՞ս Ճառս թէ ծնողաց և թէ դաստիարակաց վերաբերեալ շատ ուղիղ սկզբունքներ և Ճշմարտութիւններ պարունակելուն հոս տեղս կը հրատարակենք :

Ճառախօսութենէն ետե Պահէ-

րէցը յորդոր մը խօսելով առ աշակերտութեան քաշխեց իրենց պատուայ միցանակները , իւրաքանչիւրոց ըրած յառաջադիմութեանը համեմատ՝ ինչպէս որ հետագայ ցուցակին մէջ կ'երեայ . և 'ի ձայն երաժշտութեանց և շատ ուրախակցութեանց ժողովքը լսւծուեցաւ :

Որովհետեւ քաղքիս սրբազնն Պատրիարքը ծերութեան և անձնական տկարութեան պատճառուաւ իր փոխանորդը Ո՞ . Ո՞րոյ զինքը հոն ներկայացուցեր էր , անոր համար դիմացի կիրակին բարեհաջեցաւ մասնաւորապէս այց ելլելու Ա արժարանին , և վարժապետաց և աշակերտաց քանի մը քաջալերական խօսքեր խօսեցաւ՝ կրօնից և ազգին պայծառութեանը համար ունեցած եռանդին օրհնելով :

Ի՞ս տարուան ուսումնական տարւոյն բացմանը՝ որ եղաւ անցեալ ամսուն 21 էն Ա արժարանիս աշակերտաց թիւն էր 28 որ երկու դաս բաժնուած են , առաջին դասը որ 15 հոգի են՝ կը մտնեն իրենց աշակերտութեան երրորդ տարին , որոնց անունը ցուցակէն յայտնի է . իսկ երկրորդ դասը որ կը բաղկանայ 13 տղոցմէ անցեալ ամսուն վերջերը հասած ըլլալով՝ իրենց աշակերտութեան առաջին տարին կը սկսին ու ասոնք են .

Յովսէփ Խազըշեան .

Ծովմաս Ծակրզիեան .

Յովհաննէս Իլթունեան .

Դաւիթ Ծակեանց .

Պօղոս Ո՞աղաքեան .

Ո՞կրտիչ Իշեմեան .

Արապին Ծաղլըեան .

Յակոբ Իուլժեան .

Յովհաննէս Շահինեան .

Յովհաննէս Ծաւուքշեան .

Գէորգ Լպտուլլահեան .

Յովհակիմ Իշապեան .

Ուուտոլֆ Լյուբնեան .

ԱՆՈՒԱՆՔ

U.S. DEPT. OF JUSTICE

ANSWER

Ա Կ Ա Գ Ո Ւ Թ Ե Ա Ն